Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առաջդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, ապրիլ-հուլիս 2026, № 2 (71), БАРЕГОРЦ

Բազմազավակ ընտանիքները միշտ ուշադրության կենտրոնում

Հանգստյան օրերը հիմնադրամի հոգաբարձության խորհրդի անդամների համար հաճախ լինում են աշխատանքային: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» շահառուներ, Արցախի Քաշաթաղի շրջանից բռնի տեղահանված

Շահառուների գրանցման պահը

բազմազավակ ընտանիքներին նորից առիթ ունեցանք հանդիպելու այս կիրակի ևս: 50 ընտանիքներին սիրով տրամադրվեց հասանելիք սննդային օգնությունը:

Մեզ էր միացել ԱՄՆ-ից ժամանած, Հոգաբարձուների խորհրդի ԱՄՆ անդամ, ԱՄՆ-ում հիմնադրամի լիազոր ներկայացուցիչ Արմոնդ Վարդանյանը և Մեծ Բրիտանիայից հոգաբարձության խորհրդի անդամ Բագրատ Նազարյանը: Տեղի ունեցավ նաև հոգաբարձության խորհրդի արտահերթ նիստ: Մեր

Խորհրդի անդամները արտահերթ նիստից հետո նկարվեցին հիմնադրամի ԱՄՆ լիազոր ներկայացուցիչ, խորհրդի անդամ Արմոնդ Վարդանյանի հետ

խորին երախտագիտությունն ենք հայտնում բոլոր հովանավորներին և կամավորներին, ովքեր պարբերաբար և մեծ ջանադրությամբ սատարում են այս աստվածահաճո գործին:

:

Արմոնդ Վարդանյանը խորհրդի անդամների և շահառուների հետ

Օգնությունը շարունակվում է

Ամեն ամսվա պես, նորից մեկնեցինք Տավուշի մարզի Հաղթանակ գյուղ՝ Արցախի Ասկերանի շրջանից բռնագաղթված և Հաղթանակ գյուղում վերաբնակեցված Սարգսյանների և Ավանեսյանների բազմազավակ ընտանիքներին փոխանցելու «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կողմից նախատեսված սննդային

Աղաբաբյան քույրերը հասցրեցին օգնությունը Տավուշի մարզի Հաղթանակ գյուղում բնակվող Ավանեսյանների ընտանիք

փաթեթները, որոնք գոնե մի որոշ ժամանակահատված կթեթևացնեն հատկապես Սարգսյանների ընտանիքի մոր՝ տիկին Վարսիկի հոգսը, ով, չունենալով մշտական աշխատանք, յոթ երեխաների տարրական սննդով ապահովելու համար աշխատում է օրավարձով:

Երեխաները, ովքեր թեպետ կաշկանդվում էին խոսել, այդուհանդերձ, իրենց սրտում պահում էին

Վարսիկ Սարգսյանի ընտանիքում

շնորհակալության զգացում, որն ակնհայտորեն արտացոլվում էր նրանց աչքերի մեջ:

Ինչպես մեր յուրաքանչյուր այցի ժամանակ, նորից զրուցեցինք Արցախի մասին, որի տպավորությամբ վերադարձի ճանապարհին վերհիշեցի 2017 թվականը, երբ Բագրատ Սրբազանի հայրական օրհնությամբ և առաջնորդությամբ՝ մեկնեցինք Արցախ: Օրեր, որոնք ամենաթանկ ու ամուր կերպով դաջվել են սրտիս ու հոգուս մեջ և հավիտենապես կմնան ինձ հետ:

Սարգսյան ընտանիքի անդամ Լիլիթը ուրախությամբ ընդունեց օգնությունը

Չգնահատեցինք մեր տունը, միասնական չեղանք, որի հետևանքով էլ կորցրինք: Թիկունքը պարտվեց, պարտվեցինք մենք՝ առաջնագիծը, տղերքը՝ կյանքի գնով հաղթեցին, իսկ մենք նրանց հաղթանակ ենք պարտք: Պարտք, որի վերադարձման համար հոգով, մտքով, սրտով կյանքի ուժեղ ուղի հաստատելն է և առաջ ընթանալը: Սա է ամբողջ իրականությունը: Մինչև մենք լռությամբ ու հանդարտությամբ ինքներս մեր մեջ՝ մեր ներսում դասեր չքաղենք և մեր սեփական կենսագրության և պատմության առջև մեր քայլերն այդպիսին չդարձնենք, մեր կյանքը անընդհատ տեղում դոփման շարան է լինելու...

Հիմնադրամի կամավորներ,
Սյուզաննա և Ռուզաննա Աղաբաբյաններ,
Կողբ, Տավուշի մարզ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՍ ԱՄՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԶԱՐԵՀ ՄԱՐՏԻՆԻ ՀԵՏ

Թղթ.- Հարգելի՛ Զարեհ Մարտին, ես մի փոքր բնական, մի քիչ տարօրինակ հարցով եմ սկսելու մեր զրույցը: Ձեզ ճանաչում եմ վաղուց. տարիներ առաջ Դուք ավարտեցիք ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետը: Գիտեմ, որ Ամերիկան է Ձեր ծննդավայրը, այնտեղ եք ապրում և աշխատում: Ձեր մասնագիտությունն ինչպե՞ս եք կիրառում ԱՄՆ-ում, այն ինչ-որ բանով օգնո՞ւմ է Ձեզ:

Զ. Մ.- Իհարկե, օգնում է, անշո՛ւշտ: Հայոց լեզվի և գրականության մասնագիտական հարցերով թեև չեմ զբաղվում, բայց Ամերիկայում՝ հայաշատ բնակավայրում, դատարաններում աշխատում եմ որպես պաշտոնական թարգմանիչ՝ անգլերեն – հայերեն, հայերեն-անգլերեն, իսկ խորացված հայոց լեզուն և գրականությունը ինձ համար, մայրենի լինելուց բացի, նաև մասնագիտական գործիքներ են, որոնք էլ ավելի են դյուրացնում թարգմանական գործը և մշակութային շփումը մարդկանց հետ:

Թղթ.– Հարգելի՛ Զարեհ, Ձեր **Մարտին** ազգանունը կարծես բացատրության կարիք ունի. Դուք և Ձեր նախնիները վաղո՞ւց եք Ամերիկայում:

Զ. Մ.– Նախնիներս այո՛, վաղուց են դարձել ամերիկաբնակ, ես էլ այնտեղ եմ ծնվել: Որքան գիտեմ՝ **Զարեհ** անունս պարթևական – իրանական ծագումով

Զարեհ Մարտինի հանդիպումը շահառուների հետ

հայկական արքայական անուն է, որ ոսկեփայլ է նշանակում կամ ոսկուց պատրաստված և գործածվել է հայոց մեջ դեռ Երվանդունիների և Արտաշիսյանների ժամանակներից, իսկ **Մարտին** ազգանունս, հավանաբար, **Մարտիրոսյան**-ից է, որը վկա՝ հավատի և գաղափարի կամավոր զոհ, նահատակ, մարտիրոս է նշանակել: Ամերիկյան միջավայրում սերունդներ հետո **Մարտիրոսյան**-ը ձևափոխվել, դարձել է Մարտին: Ազգանունս թեև «ծամածռված» է: Ես հավատարիմ եմ իմ հայկական ծագմանը՝ իմ հայ լինելուն. Ամերիկայում ապրում եմ ինչպես հայաստանցի:

Թղթ.– Ձեզ ԱՄՆ-ում էլ եմ հանդիպել, մեր

Տրամադրվող սննդի տեսականու հետ ծանոթացավ ԱՄՆ խորհրդի անդամ Զարեհ Մարտինը

Հիմնադրամի գործերով. այնտեղ էլ անելիքները շատ են՝ թեկուզ կազմակերպչական իմաստով: Դուք այնքան նվիրյալ եք մեր բարեգործական ծրագրերի կենսագործմանը, որ արժանիորեն ընտրվել եք հոգաբարձու: Փոխանակ նվազելու և թուլանալու՝ ընդհակառակը, ամերիկյան միջավայրում ավելի է խորանում ու ամրանում Ձեր կապը մայր հայրենիքի ու նրա մարդկանց հետ:

Զ. Մ. – Այդ պատասխանատվությունը ես համարում եմ հայ մարդու բարոյական պարտք՝ վտանգավոր վիճակում գտնվող մեր հայրենիքի, տեղահանված ու հայրենազրկված նեղության մեջ հայտնված հարյուր հազարավոր արցախցի իր ազգակիցների հանդեպ: Մինչդեռ թե՛ Հայաստանում, թե՛ Ամերիկայում անտարբեր, անհաղորդ ու սառնասիրտ մարդիկ շատ կան: Ես չէի կարող նրանց նման հանգիստ մնալ. անտարբերության ու եսասիրության ճահճում. բնական մղումս գտավ օգնելու կերպը՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» անդամակցությունը: Թե՛ Ամերիկայում, թե՛ Հայաստանում հաճույքով եմ մասնակցում Հիմնադրամի աշխատանքներին՝ գիտակցելով, որ դա՛ է հայրենակիցներիս օգտակար լինելու ճշմարիտ ուղին:

Թղթ.–Ի՞նչ կցանկանայիք «Բարեգործի» ընթերցողներին ու մեր գործի նվիրյալներին:

Զ. Մ. – Ամենից առաջ՝ համբերություն, մեր գործի արդարության գիտակցում: Իսկ Հայաստանին ու հայությանը՝ գալիք լավ օրեր, երբ վերանան այդ տեսակ բոլոր մտահոգությունները:

Հարցազրույցը վարեց պրոֆ. Ս. Մուրադյանը

ԱՆՄՈՌԱՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ս.թ. ապրիլի 23-ին Տորոնտոյի ՀՕՄ-ի ամենօրյա վարժարանի 11-րդ դասարանի աշակերտներն այցելեցին Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետ, որտեղ նրանց ջերմությամբ, հայրական հոգատարությամբ և մեծ սիրով ընդունեց վաստակավոր մանկավարժ, պրոֆեսոր, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն պրոֆ. Գուրգեն Մելիքյանը: Այցի ընթացքում աշա-

Գուրգեն Մելիքյանի հանդիպումը աշակերտների հետ

կերտներին ուղեկցում էին ուսուցիչներ Սոնա Հովսեփյանը և Ալեքս Մովելը, որոնց անմիջական մասնակցությունն ու նվիրվածությունը կարևոր դեր ունեցան հանդիպման արդյունավետ կազմակերպման և հաջող ընթացքի ապահովման գործում: Հանդիպման ընթացքում պարոն Մելիքյանը ներկայացրեց ֆակուլտետի գործունեությունը, ինչպես նաև հանգամանալից անդրադարձավ Արցախում վերջին երեք տասնամյակների ընթացքում իրականացված կրթական, ազգային և հասարակական նշանակության ծրագրերին՝ ընդգծելով դրանց կարևորությունը մեր ժողովրդի ինքնության պահպանման գործում:

Նա հյուրերին համառոտ ներկայացրեց Երևանի պետական համալսարանի և մասնավորաբար նրա արևելագիտության ֆակուլտետի գործունեությունը, ապա `անդրադարձավ Հիմնադրամին ու նրա բարե-գործական ծրագրերին, որոնք ուղղված են հայրե-նազրկված ընտանիքների սոցիալական, կրթական, հոգեբանական խնդիրների հաղթահարմանը՝ նրանց

Հիշատակի լուսանկար

տալով նոր հույս և հավատ վաղվա օրվա նկատմամբ: Առանձնահատուկ հետաքրքրությամբ աշակերտները լսեցին նաև այն ահռելի և նվիրական աշխատանքների մասին, որոնք այսօր իրականացնում է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»՝ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների շրջանում: Պարոն Մելիքյանը ներկայացրեց բազմաթիվ ծրագրեր և նախաձեռնություններ, որոնք ուղղված են հայրենազրկված ընտանիքների սոցիալական, կրթական և հոգեբանական խնդիրների հաղթահարմանը՝ նրանց տալով նոր հույս և հավատ վաղվա օրվա նկատմամբ: Հանդիպումն անցավ ջերմ, անկեղծ և բովանդակալից մթնոլորտում: Աշակերտները մեծ ուշադրությամբ լսեցին և ակտիվորեն մասնակցեցին քննարկումներին, հետաքրքրված հարցեր ուղղեցին պարոն Մելիքյանին:

Այս հիշարժան այցը խոր հետք թողեց աշակերտների հոգիներում: Նրանք Կանադա վերադարձան հարուստ տպավորություններով, նոր գիտելիքներով և հայրենիքին ավելի մոտ զգալու զգացումով: Նման հանդիպումները կարևոր կամուրջ են Սփյուռքի և Հայաստանի միջև, և ուրախությամբ կարող ենք նշել, որ այսուհետ դրանք կկրեն ավելի հաճախակի և շարունակական բնույթ՝ նպաստելով երիտասարդ սերնդի ազգային գիտակցության ամրապնդմանն ու հայրենանվեր դաստիարակությանը:

Սոնա Հովսեփյան, Տորոնտո, Կանադա

44-օրյա պատերազմի հերոս եզդիներին նվիրված «ՈՍԿԻ ՍԵՐՄԵՐ. Երախտագիտության և հարգանքի կրթամրցանակներ» 5-րդ ծրագիրը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի և «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի «ՈՍԿԻ ՍԵՐՄԵՐ» կրթամրցանակային համատեղ ծրագիրը նվիրված է Արցախյան 44-օրյա պատերազմում հերոսացած մեր եզդի եղբայրների հիշատակին: Երախտագիտության և հարգանքի այս ծրագիրը գործում է 2021 թվականից:

Կրթամրցանակը մեր երախտագիտության տուրքն է եզդի հերոսների հիշատակին: Պատերազմի օրերին նրանց հավատարմության և խիզախության օրինակը մեկն է մեր ժողովուրդների բարեկամության հարատևության վկայություններից: Եզդիները պատերազմին մասնակցել են ոչ միայն որպես զինապարտներ, այլև կամավորական 2 ջոկատ են կազմել և հայ եղբայրների հետ հերոսաբար մարտնչել թշնամու դեմ.

Եզդի հերոսներին նվիրված 5-րդ կրթամրցանակն է հանձնվելու այս տարի: Կրթամրցանակի հովանավորը Մուրազի ընտանիքն է: Արևելագիտության ֆակուլտետում «Ոսկի սերմերի» հարցազրույցները անկաշկանդ ու բազմաբովանդակ խոսակցությունների, մտքերի ու գաղափարների փոխանակության, համարձակ կարծիքների արտահայտման հարթակներ են: Հատկապես՝ երբ ներկա է ֆակուլտետի նահապետ, նախկին դեկան, Մովսես Խորենացու մեդալի և «Մարտական խաչ» 2–րդ աստիճանի շքանշանի ասպետ, ինչպես և մի շարք այլ մեդալների և շքանշանների արժանացած, հանրային մեծ ճանաչում և սեր վայելող պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը: Կրթամրցանակի հավակնորդների համար հայրենասիրության, հայ և եզդի ժողովուրդների բարեկամության, արժանապատվության դասի վերածվեց պարոն Մելիքյանի առանձնասենյակում տեղի ունեցած զրույցը, որին ներկա էին նաև ֆակուլտետի դեկանի օգնական Սվետլանա Հարությունյանը և «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Արմինե Պետրոսյանը: ՀՀ 5 բուհում գործում է 12 «Ոսկի սերմեր» ծրագիր, դրանցից 8-ը՝ ԵՊՀ-ում: «ՈՍԿԻ ՍԵՐՄԵՐ. երախտագիտության և հարգանքի կրթամրցանակներ» ծրագրի նշանաբանն է՝ «Մեզ թաղեցին, բայց մենք սերմեր էինք»: Ծրագիրն արդեն շուրջ 80 ոսկի ծիլ ունի: Կրթամրցանակը շնորհվեց Վոլոդյա Մկրտչյանին՝ 250,000 դրամ, խրախուսական մրցանակ տրվեց Մարիա Անդրեասյանին՝ 50,000 դրամ: Եզդի ուսանող Արամ Ուրոսյանը «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կողմից արժանացավ հատուկ մրցանակի՝ 50,000 դրամ:

Պարոն Մելիքյանը հարցազրույցի բոլոր մասնակիցներին նվիրեց Ստեփան Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» գիրքը, որը լույս է տեսել իր ղեկավարած հիմնադրամի հովանավորությամբ:

Արմինե Պետրոսյան,
«Հայ Ձմեռ պապ» բարեգործական
հիմնադրամի տնօրեն

Քննարկում Արմինե Պետրոսյանի հետ

ԴԵՊԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ...

Արցախի առաջնագծի կետերից մեկում՝ ծառայության ժամանակ դասակի հրամանատարը՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի շրջանավարտ Գարիկ Միքայելյանը, չարաբաստիկ դիպվածով կորցնում է զույգ ձեռքերը: Արցախից մինչև Հայաստան արյունաքամ լինող զինվորին չորս հիվանդանոց պտտելուց հետո՝ երեկոյան են հասցնում Երևան՝ Մուրացանի հոսպիտալ, որտեղ էլ, հրաշքով ողջ մնացած զինվորը պիտի վերակենդանացման բաժանմունքում լուռ պայքարեր ապրելու համար՝ տարիներով կրելով ծանր պրոթեզները: Ճարտարագիտական համալսարանի մագիստրատուրան ավարտելը և գեղանկարչության՝ որպես կյանքի նոր ու փրկարար իմաստ հայտնաբերելը անկյունադարձային եղան:

Հայաստանի պարալողի բացարձակ չեմպիոն, Գարիկը, կնոջ՝ Արմինե Մելիք-Իսրայելյանի հետ

Այսօր արդեն ժողվարպետ Գարիկը արվեստում նոր ուղղություն է հիմնել. դա էմոցիոնալ ռեալիզմն է, քանի որ ոգեշնչում ստանում է մասնավորապես բնությունից: Գարիկի գեղանկարներում ապրում, շնչում, խոսում ու պատմում են ծաղիկները, նրա ամեն վրձնահարվածում կա հույզ, պայքար հանուն գեղեցիկի: Անհրաժեշտ է նրա արվեստը՝ պայմանավորված ոչ միայն ազնվության բարձրագույն նոտայով: Նրա կտավներում մարդկային շոշափելիքի բացակայությունը թողել է ներկայության ձեռագիր. զրկված լինելով շոշափելիքներից՝ զույգ ձեռքերից՝ Գարիկը կարողանում է նյութին տալ զգայական այն բոլոր նրբերանգները, ինչը հնարավոր է շոշափելիքով զգալու դեպքում:

Բազմաֆունկցիոնալ, շարքից դուրս եկած պրոթեզների բացակայությունից հետո նոր մարտահրավերները նրան չկոտրեցին. այլընտրանքը ... ոտքով նկարելն էր ու այդպես ստեղծագործելը: Անհատական ու խմբակային ցուցահանդեսներ, որոնցից մեկում էլ գտավ արվեստաբան կնոջը՝ Արմինեին, ով նախընտրել էր բացառիկ նկարչի մասին գրել առանց նրան տեսնելու՝ ներշնչվելով միայն նրա գործերից:

Մի այլ բացահայտում ու զարգացում էր լողը. զինհաշմանդամ երիտասարդի համար այն դարձավ նոր ճանապարհ, բուժական լողից Գարիկը առանց ձեռքերի ՀՀ բացարձակ չեմպիոն դարձավ հաշմանդամային՝ պարալողի ՀՀ առաջնությունում՝ ապացուցելով, որ մարդկային կամքն ու հոգու թևածումները անկասելի են: Տարածաշրջանում միակը լինելով տղամարկանց մեջ, ով լողում է առանց զույգ ձեռքերի, նա հայտնվեց բոլորի ուշադրության կենտրոնում: Ամիսներ առաջ Ֆրանսիայի Թավերնի քաղաքի Ալիս Միլաթ լողավազանում տեղի ունեցավ աշխարհի հաշմանդամային լողի (Para Swimming World Series France 2026) մրցույթ, որին մասնակցեց նաև Հայաստանի ներկայացուցիչը՝ Հայաստանի 2025 թ. պարա լողի բացարձակ չեմպիոն Գարիկ Միքայելյանը:
Առաջիկայում զինհաշմանդամ մարզիկին սպասվում է Թուրքիայում կայանալիք աշխարհի պարալողի խաղերի մասնակցությունը, որի խոչընդոտը ֆիանասների բացակայությունն է: Հարցազրույցը Գարիկի հետ այս բացառիկ ու պայքարող հայ տեսակի մասին է:

–Հարգելի՛ Գարիկ, Դուք մասնակցեցիք Փարիզում կայացած աշխարհի պարալողի մրցումներին՝ որպես տարածաշրջանում միակ պարա լողորդ, ով չունի ձեռքեր, ինչպե՞ս անցավ մրցաշարը, ի՞նչ ձեռքբերումներով եք վերադարձել:

–Հաղթանակների ու մեդալների ճանապարհը հեշտ չի տրվում, պիտի պայքարիդ ոգին պահես ու գնաս առաջ:

Գարիկը պատրաստվում է դուրս գալ պայքարի

Փարիզում՝ աշխարհի պարա լողի առաջնությունում իմ մասնակցությունը կարևոր էր նրանով, որ Հայաստանն առաջին անգամ էր նման մրցաշարում ունենում իր

մարզիկը: Ես 2025 թ. Հայաստանի առաջնությունում արժանացա երեք ոսկե մեդալի և դարձա Հայաստանի բացարձակ չեմպիոն՝ թիկնալողով 50 մետրը 48 վայրկյանում հաղթահարելով: Դա ինձ ոգևորեց և ինձ համար հաշվետվություն էր, թե ի՞նչ մակարդակի եմ հասել ֆիզիկապես՝ մի քանի տարվա պարապմունքների արդյունքում: Փարիզում որակավորում ստացա, դեռ մի քանի այլ մրցույթների արդյունքներ էլ պիտի գրանցել՝ հասնելու 2028 թ. Լոս Անջելեսի Պարալիմպիկ խաղերին:

–Լինելով զինհաշմանդամ, ինչպե՞ս որոշեցիք զբաղվել սպորտով:



Պարալողի մասնակից Գարիկը Փարիզի Աստվածամոր Տաճարում

–Ես լողալ գիտեի մանկուց: Ձեռքերս կորցնելուց հետո երբեմն լողում էի Կարմիր խաչի լողավազանում, մի օր Սևանում կինս տեսավ իմ լողը, զարմացավ, որ կարողանում եմ այդպես լողալ և այդ ժամանակ իմացանք, որ Զինվորի տունը լողի ծրագիր ունի զինհաշմանդամների համար. դիմեցինք. մի խումբ հավաքվեց, սկսեցին պարապմունքները: Իմ առաջին մարզիչը ջրագնդորդ, հերոս Հենրի Հակոբյանի հայրն է՝ Համիկ Հակոբյանը, ով, պատերազմում իր որդուն կորցրած լինելով, ուժ էր գտել իր մեջ՝ մեզ լողալ սովորեցնելու: Զինվորի տան բուժական լողը մենք վերածեցինք սպորտայինի, արդյունքներն էլ շուտով տեսանելի եղան: Օլիմպավանում շարունակվող իմ մարզումները ներկայիս մարզիչիս՝ Կարեն Սարգսյանի հետ ինձ նոր աստիճանի են հասցրել: Փարիզի այս մրցաշարին իր աջակցությունն առաջարկեց նաև մեր Զինվորի տունը Veterans of Armenia-ի միջոցով:

–Որքանո՞վ եք կարևորում նման մրցաշարերին մասնակցությունները:

–Յուրաքանչյուր հասարակության դեմքը նրա հաշմանդամներն են, թե որքանով են նրանք այդ հասարակության մաս ու անդամ: Նման մրցաշարերը երկրի ուժեղ կողմը ներկայացնելու առիթներ են, նաև հաշվետվություն՝ ինքդ քո ուժերի ու կարողությունների առջև, փորձ են ու խթան ավելին անելու համար: Պետք է նմանատիպ մրցաշարերին մասնակցելով, արդյունքներ գրանցելով ճանապարհ հարթել դեպի պարալիմպիկ խաղեր:

–Ի՞նչ բարդությունների առաջ եք կանգնել Ձեր ճանապարհին և ինչպե՞ս են լուծվել դրանք, հիասթափեցնող չէ՞ արհեստականորեն ստեղծված նոր մարտահրավերների բախվել:

–Հազար ու մի կոտրող վերաբերմունք, դիպվածներ, որոնք ստեղծվել են նախանձից դրդված, կամ ոմանք փորձել են իրենց ամենակարող զգալ՝ հասկացնելով, որ քո ձգտումները իրենց ցանկությունից են կախված, որպեսզի իրականություն դառնան կամ չդառնան... Զզվելի է նման իրավիճակը, հոգով ու էությամբ արվեստագետ, ներքին արիստոկրատիզմ ունեցող մարդուն ստիպում են լինել իրենց գործողությունը կանխող: Կար մրցելույթ, որտեղ պետք է մեկնարկը սկսեի սրբիչից ատամներով բռնած, Արմինեն պահեց կարգը ինչպես հարկն էր և ես առաջինը հաղթահարեցի 50 մետր լողավազանը:

–Բարերարների վերաբերմունքն ու մարդկանց ուշադրությունը Ձեր հանդեպ եղավ բավականին ջերմ և տվեց արդյունք, պարտավորեցնո՞ղ էր այդ ամենը մրցույթի մասնակցության պահին:

–Ժողովրդական խոսք կա, ով միանգամից է տալիս՝ նա տալիս է կրկնակին... Այլևս փաստ է, որ ես Հայաստանը ներկայացնող միակ զինհաշմանդամ լողորդն էի Ֆրանսիայում կայացած աշխարհի խաղերին, առաջին բացարձակ չեմպիոնը Հայաստանի Հանրապետության պարա լողի առաջնությունում, սա փաստ է ու կենսագրություն: Շատ դժվարություններով եմ հասել այդ մակարդակին, անցել մարդկային լավ ու բարի, նաև անարդար դիպվածների միջով, բայց չեմ կորցրել հավատս ու բարությունս, շնորհիվ Արմինեի, ով իմ կինեզիստն ու օգնականն է, իմ ոգևորողը, որ լողս ու մարզումներս շարունակեմ: Լողավազան, որը Օլիմպավանն է, ինձ աջակցել է պարոն Գագիկ Ծառուկյանը, որպեսզի ազատ պարապեմ, շարունակեմ մարզումներս...

Անհրաժեշտության դեպքում մեզ նեցուկ է եղել զինհաշմանդամների լավագույն բարեկամը՝ պրոֆ. Գուրգեն Մելիքյանը: Մեզ միշտ ոգևորել ու առանձնահատուկ ուշադրության է արժանացրել մեր լավագույն բարեկամներից ճարտարապետ Աշոտ Բաղդասարյանը, ում համար մենք չհանձնվելու և պայքարի սիմվոլ ենք դարձել, անգամ իր պարտեզում մեր տնկած ծառերի կողքին հատուկ ցուցանակ կա իմ ու կնոջս անուններով, բարի մարդիկ միշտ էլ եղել են իմ ճանապարհին Աստծո շնորհիվ, ինչի համար մեծապես շնորհակալ եմ իրենց: Երբ եկավ մրցույթի պահը՝ իմ լավ ընկերոջ, ով նույնպես մարզիկ է և ունի հաշմանդամություն՝ Հովհաննեսի խորհրդով նստեցի ու ոտքով դրամաշնորհային հայտ գրեցի, ներկայացրեցի «Հ.Հովնանյան Ընտանեկան հիմնադրամին», որը բավարարեց մրցույթի մասնակցության որոշ ծախսեր: Այդ հիմնադրամի բարեհամբույր ընդունելությունն ու մարդկային մոտեցումը, անձդ կարևորող հարգալից վերաբերմունքը արժանի են շնորհակալության ու հիացմունքի:

–Եթե լինենք անաչառ և անկեղծորեն խոստովանենք, ի՞նչ վերաբերմունք կա այս սպորտաձևի նկատմամբ մեր պատկան մարմինների կողմից:

–Լողը անհատական մարզաձև է, անհատ է կերտում, իսկ կոփված, ուժեղ անհատն էլ մեծ առումով իր հասարակության դեմքն է, երևի չենք ուզում դեմք ունենալ, եսի՞մ... Դավիթ Համբարձումյան ունեցած, Շավարշ Կարապետյան ունեցած ազգը իրավունք ունի՞ այսքան ինտերվալ ունենալ այս ասպարեզում, նրանցից ամեն մեկի կյանքը մի ֆիլմ է: Ինքս բուժական լողից եմ պարալողը հասցրել սպորտայինի, իսկ դա մեծ ջանքեր է պահանջում քեզնից և քո ընտանիքից:

–Ձեր անձնական փորձով, ինչի՞ պակասն է, որ ցցուն է և առաջնահերթ լուծելու կարիք ունի:

–Պետք է փոխել հասարակության վերաբերմունքը, նաև օրենքներ սահմանել հստակ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ տարբեր իրավիճակների համար, գուցե այդպես կրթել, որ ցանկացած հերթի մեջ, հիվանդանոցում, թե խանութում, թանգարանում, թե փողոցում հաշմանդամություն ունեցող անձը առաջնահերթության իր իրավունքից օգտվել կարողանա: Սրանք մանրուքներ չեն, մեր կյանքը բարդացնող կամ հեշտացնող կարևոր օղակներ են:

–Առաջիկայում նոր մարզումների պատրաստվո՞ւմ եք, կա՞ն նոր մրցաշարեր:

–Առաջիկայում Թուրքիայում և Աբու Դաբիում տեղի ունենալիք մրցաշարերին եմ պատրաստվելու: Երբեք չէի մտածի, որ կգնամ Թուրքիա, բայց հիմա ուզում եմ գնալ, և տա՛ Աստված, որ Հայաստանի դրոշը բարձրացնեմ այնտեղ: Անհնարինը առանց ձեռքերի լողն է, մնացածը ցանկություն է ու պարտք, լինենք ամեն մեկս մեր առաքելության կրողը մինչև վերջ, և հաղթանակներն անխուսափելի կլինեն... Առաջ Աստված:

Հարցազրույցը վարեց՝
Արվեստաբան Արմինե Մելիք- Իսրայելյանը
Լուսանկարները՝ իր անձնական արխիվից

Վիրավոր ու հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ժամկետային զինծառայողների համար Սևանա լճի ափին գործում է 10-օրյա ճամբար

Արցախյան գոյամարտի բոլոր ժամանակներում՝ սկսած 1988-ից, շատ քաջորդիներ են վիրավորվել, որոնց մեծ մասը դարձել է հաշմանդամ: Այսօր շատ է կարևոր, որ բացի պետական հոգածությունից, նույն քաջորդիների ճակատագրով հետաքրքրվեն, զբաղվեն նաև հասարակական կազմակերպությունները, անհատները: Արդեն տարիների պատմություն ունեցող «Վահագն» ռազմահայրենասիրական հասարակական բարեգործական կազմակերպությունը (ՌՀԲՀԿ) մշտապես է հայրենիքի պաշտպանների հետ: ՀԿ հիմնադիր նախագահ Կարո Մորուք Կարապետյանի նախաձեռնությամբ ու կազմակերպմամբ՝ հուլիսի 7-ից վիրավոր ու հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ժամկետային զինծառայողների համար Սևանա լճի ափին գործում է 10-օրյա ճամբար: Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի հարևանությամբ գտնվող «Լոռի-Սևան» հանգստյան վայրում Արցախյան բոլոր պատերազմների 30-ից ավելի մասնակիցներ իրենց հանգիստն են անցկացնում: Մասնակիցների թվում են տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մորուք Կարոն տեղեկացրեց՝ «Լոռի-Սևան»-ի տերը՝ Հարություն Իզմիրյանը, մեծ սիրով ու անվճար է տարածքը տրամադրել հայրենիքի պաշտպան վիրավոր ու հաշմանդամ ազատամարտիկների հանգիստը կազմակերպելու համար: Իր աջակցությունն է ցուցաբերել «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ը՝ ի դեմս հիմնադիր ու գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի աջակցությամբ: Աջակցել են նաև այլք: Մորուք Կարոն ասաց ասաց նաև՝ կարևոր է, և պարտավոր ենք նման միջոցառումներով տոն դարձնել նաև հաշմանդամների օրերը: Մեծ կարևորություն ունի օգտակար լինել առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկներին, վերջին պատերազմների ընթացքում ծանր վիրավորում ստացած ու հաշմանդամ դարձած ժամկետային զինծառայողներին: Տղերքը պետք է իմանան՝ միայնակ չեն, իսկ միասին լինելով առավել ուժեղ ու առողջ են լինելու: Ճամբարի օրերին իր ղեկավարած ՀԿ-ի կողմից նա պատվոգրեր, շնորհակալագրեր ու մեդալներ հանձնեց մասնակիցներին, ինչպես նաև՝ Գուրգեն Մելիքյանին:

"Վահագն" Ռ.Հ.Բ.Կ-ի շահառուները գեղատեսիլ Սևանում

«Վահագն» Ռ.Հ.Բ.Կ-ի կողմից շնորհակալագիրը Հիմնադրամին



«ՎԱՀԱԳՆ»
ռազմահայրենասիրական
բարեգործական
հասարակական
կազմակերպություն

«VAHAGN»
military-patriotic charity
NGO

«ВААГН»
военно-патриотическая
благотворительная
организация

Հասցե՝ ք. Երևան, Արաբկիրի 1-ին զանգված, 10շ., 43 բն., հեռ. 093 51 08 57, էլ. հասցե՝ Vahagn.rbhk@mail.ru

"Գորգեն Մկրտչյան" Բաղրամյանի ռազմապատմական թանգարանի հիմնադրամ"
գործադիր տնօրեն Գորգեն Մկրտչյան

Պիտոն շնորհակալագիր

«Վահագն» Ռ.Հ.Բ.Կ-ն իր խորին շնորհակալություններն 5 հայտնում ձեզ, ձեր դիտոն բեղրանիզիին սրտաց և արդյունավետ աշխատանքի և օգնելու համար:
Մենք ձեր օգնությունը արտացոլվեց անելի տեսքով՝
Տարեցների տուն, փարեզ - 60 հատ (1 կգ)
գոնապի նամակ - 60 հատ (1 կգ)
Երիտասարդների անկոչ, տուն - 60 հատ
Տարեցների տուն - 15 հատ (երկարյա փարեզներով)
փայտե - 10 հատ, կերակուր և սոսնձ - 14 հատ, Տաքարանի 4 արկղ 40 հատ, ատիշարտ - 10 հատ:
Այս անգամ անունը ձեզ սիրով և երախտիքով կօգտագործվի իր նպատակին: Գրանցված դուք, և միշտ կարողանաք օգնել և հասնել բոլոր կարիքավորներին և տրամադրվելիներին: Եթե մի քիչ երկար կդանդաղեցնեք անելու անգամ հիմնադրամին հայտարարելու դրամ փոխանցեմ:
Շնորհակալություն բոլոր ազգակիցներին:

«ՎԱՀԱԳՆ» ՌՀԲԿ
հիմնադիր նախագահ՝
Կ.Հ. Կարապետյան

«ՎԱՀԱԳՆ» «ВААГН» «VAHAGN»

11.06.2026թ.

ԵՐԿՈՒ ԱՆՈՒՇ ԽՈՍՔ ԲԺԻՇԿ ՆԻԿ ԱԳՈՒԼՅԱՆԻՆ

Երբ Շուշին կրկին (կհավատամ որ ժամանակավորապես) դուրս եկավ մեր վերահսկողությունից, «Վարանդա» երգչախմբի պարապմունքներն ու համերգները հարկադրված «տեղափոխեցի» Ստեփանակերտ ու «Երգող Արցախ» երգչախմբային ծրագիրն սկսեցի իրականացնել, որն այժմ, երբ (դարձյալ կհավատամ) ժամանակավորապես մեր վերահսկողությունից դուրս է ամբողջ Արցախ աշխարհը, ծրագիրը շարունակում եմ իրականացնել համայն հայության

Շուշիի "Վարանդա" երգչախումբը Աղավնոյում, 2015

քաղաքամայր Երևանում:

Շուշիի չարաբաստիկ անկումից հետո հարկադրաբար բնակվում էի Ստեփանակերտի հյուրանոցներից մեկում, որտեղ առաջին իսկ օրվանից նկատեցի նիհարակազմ ու բարեդեմ, առօրյա հագուկապով պարզ մի անձնավորություն, որ անգլերեն էր խոսում: Թեև անծանոթ՝ բայց խիստ համակրելի այդ անծանոթին առաջին մի քանի օրերին նախաճաշին գլխով էի բարևում: Անծանոթի հանդեպ համակրանքն այնքան աճեց, որ մի օր էլ առաջարկեցի ծանոթանալ:

Ծանոթացանք:

Պարզվեց, որ բժիշկ է, անունն էլ՝ Նիկ: Եկել է Արևելյան Ամերիկայից ու կամավորաբար ծառայում է՝ ամեն օր գնալով Ստեփանակերտից դուրս արցախյան այլ հայ քաղաքներ ու գյուղեր և անվճար բժշկական խնամք հրամցնում կարիքավորներին:

Այդ պատկառելի, անձնվեր հայորդուն իսկույն հրավիրեցի «Վարանդա» երգչախմբի փորձերին: Արագորեն բարեկամացանք, ապա շուտով ընկերացանք: Նիկն սկսեց առավել հաճախակի այցելել փորձերին, կատարել նկարահանումներ, որոնք այժմ այնքա՞ն հիշատակելի ու արժեքավոր են դարձել:

Երկու ամառ մենք գրեթե ամեն օր միասին էինք...Մեր արցախյան երեկոները հաճախ էինք միասին անցկացնում: Հարազատացած հայ մարդիկ էինք. զրուցում էինք արցախյան, ազգային ու համասփյուռքյան մտահոգող թեմաներով...

Հիմա նա բնակվում է Ամերիկայում, ես՝ Լիբանանում իսկ իրականում՝ երկուքս էլ դեռ ապրում ենք Արցախում: Ես էլ, ինքն էլ:

Երբեմնի ամենօրյա ընկերական հանդիպումները կյանքի հևքի պատճառով հիմա վերածվել են զուտ հեռախոսային հաղորդակցության: Սակայն ձևավորված ու ամրակայված հոգևոր կապը բնավ չի փոխվել:

«Ինձ համար մեծ ոգևորություն է նպաստել «Վարանդա» երգչախմբի հարատև գործունեությանը»,– գրեց նա Ամերիկայից և արդեն երկրորդ տարին է, ինչ իր նյութաբարոյական աջակցությունն է ցուցաբերում Շուշիի «Վարանդա» երգչախմբի՝ արդեն 34-ամյա երթին:

Հարազատ ընկերները միմյանց շնորհակալություն չեն հայտնում, սակայն Նիկ Ագուլյանն արժանի է երկու անուշ խոսքի՝ Արցախի ու արցախահայության նկատմամբ իր ունեցած օրինակելի ծառայական վաստակի, անսակարկ նվիրումի ու մաքրամաքուր ապրումների համար:

Շնորհակալության փոխարեն՝ բարևից ու համառոտ զրույցից հետո, որպես հրաժեշտի խոսք, ես Նիկին վստահ ասում եմ՝ մինչ նոր հանդիպում Արցախում:

Զաքար Քեշիշյան
Շուշիի «Վարանդա» երգչախմբի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար և խմբավար

Տ Խ Ր Ո Ւ Ն Ի

Ստացանք ծանր գույժ. վախճանվել է Հիմնադրամիս գործուն անդամի, մեր լավ ընկերոջ և շահառուների անկեղծ բարեկամի՝ Բագրատ Նազարյանի սիրելի մայրիկը՝ Չինար Ավետյան – Նազարյանը:

Նա ծնվել էր 09.01. 1935 թ. Իրանի Խոմեյն գավառի Դեհնո գյուղում, մահկանացուն կնքեց 19.05.2026 թվին իր տանը՝ Թեհրանում:

Հիմնադրամիս հոգաբարձության խորհուրդը, «Բարեգործ» պաշտոնաթերթի խմբագրակազմը և հիմնադրամիս շահառուները իրենց անկեղծ ցավակցությունն են հայտնում Նազարյան գերդաստանի պատվական հարսի, հայ պատվախնդիր մոր և տատիկի մահվան առթիվ և համբերություն ու մխիթարություն մաղթում նրա եղբայրներին ու քույրերին, Նազարյան գերդաստանի բոլոր սգակիր հարազատներին:

Թող նորոգ հանգուցյալը հավիտենապես մնա երկնային արքայության մեջ, նրա լույս հոգին բարի հիշատակ դառնա Նազարյան գերդաստանի բոլոր սերունդների համար:

Հոգաբարձության խորհուրդ
«ԲԱՐԵԳՈՐԾ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

Ծառատունկ՝ նվիրված Չինար Մայրիկին

Հունիսի 24-ին Երևանի պետական համալսարանի Արևելագիտության և այլ օտար լեզուների ֆակուլտետների մասնաշենքի հարևանությամբ՝ Չարենցի փողոցի մայթեզրի կանաչապատ տարածքում, իրականացվեց խորհրդանշական ծառատունկ՝ տնկվեց լիբանանյան մեկ «Մայրի» ծառ: Ներկա էին «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հիմնադիր ու գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանը, հոգաբարձուների խորհրդի նախագահ, գրականագետ, պրոֆեսոր Արծրուն Ավագյանը, անդամներ՝ ՀՀ վաստակավոր նկարիչ Շմավոն Շմավոնյանը, գրականագետ «Բարեգործ» պաշտոնաթերթի խմբագիր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը, Մեծ Բրիտանիայից բարերար Թոնի Կահվեն, Աշոտ Պողոսյանը, «Հայաստանի Հանրապետություն» թերթի նախկին գլխ. խմբագիր Արթուր Ղարագյոզյանը, Չինար մայրիկի որդիներից Բագրատը, Վիգենը և այլ հարազատներ: Պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի կազմակերպված ծառատունկերն Արցախի Քաշաթաղի տարածքում շատերն են հիշում: Տարիների ընթացքում, բացի ընդհանուր ծառատունկերից, ծառեր էին տնկվում, պուրակներ ու ծառուղիներ հիմնվում՝ նվիրված նշանավոր հայազգիներին, հիմնադրամի բարերարներին ու հարազատներին, հայ ժողովրդի բարեկամներին:

Ծառատունկի մասնակիցները նկարվեցին

Ինչպես ավանդական դարձած բոլոր ծառատունկերին, իսկ դրանք անհաշվելի են, առաջին ծառը տնկելիս, պրոֆ. Գ. Մե,լիքյանը, գինեթասը ձեռքին, ասմունքում է Լևոն-Զավեն Սյուրմելյանի 1924 թ. գրած «Ասացվածք ծառ տնկելու առթիվ» բանաստեղծությունը, այնպես էլ այժմ, ավանդույթը չխախտվեց:

«Մայրի» ծառը հողաթասում ամրացնելուց ու ջրելուց հետո, Բագրատ Նազարյանը շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին:

«- Մայրս այլևս չկա,- ասաց նա, - բայց այս ծառը՝ այս վայրում, ուսանողության սերունդների աչքի առաջ հասակ նետած, կմնա որպես հիշատակ»:

Իրենց երախտիքի խոսքն ասացին նաև Չինար մայրիկի մյուս հարազատները:

Զոհրաբ Ըռքոյան

Անվանական կրթաթոշակ /ամսական/ սեպտեմբեր-հունիս 2025-2026 ուս. տարի

Հ/հ	Ստացող	Նպատակ	Գումար- ՀՀ դրամ
1	Ա. Բաբաջանյանի անվ. պետ. քոլեջ	Լ.Զաքարյանի անվ. կրթ., Պետրոսյան Դավիթ	10000
2	Կոմիտասի անվ. ԵՊԿ	Լ.Զաքարյանի անվ. կրթ., Մաթևոսյան Թամարա	10000
3	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լ.Զաքարյանի անվ. կրթ., Գրիգորյան Վարուժան	10000
4	Ա. Բաբաջանյանի անվ. պետ. քոլեջ	Լ.Զաքարյանի անվ. կրթ., Ամարյան Լիա	10000
5	Շ. Ազնավուրի անվ. Պետ. քոլեջ	Լ.Զաքարյանի անվ. կրթ., Նահապետյան Միքայել	10000
6	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լ.Զաքարյանի անվ. կրթ., Աբգարյան Վաչագան	10000
7	ԵՊՀ հիմնադրամ	Խ. Պալյանի անվ. կրթ., Մեսրոպյան Նորա, հայ բանասիր. 4-րդ կուրս	30000
8	ԵՊՀ հիմնադրամ	Ս. Ալաջաջյանի անվ. կրթ., Ծատրյան Լարիսա, հայոց լեզու և գրակ. 3-րդ կուրս	30000
9	ԵՊՀ հիմնադրամ	Դ. և Ն. Չարչյանների անվ. կրթ.,Մարգարյան Մարիամ, ֆարմացիա մագիստր. 1-ին կուրս	30000
10	ԵՊՀ հիմնադրամ	Ն. Չարչյանի անվ. կրթ.,Կիրակոսյան Արեն, քիմիա 3-րդ կուրս	30000
		Ընդամենը՝	**180000**

*Հ.Գ. Անվանական կրթաթոշակ ստացողները սեպտեմբեր-հունիս ամիսներին ստացել են **1,800,000.00 դրամ***

Խոշոր եղջերավոր անասունների (ԽԵԱ) ծրագիրը շարունակվում է

Ամսաթիվ	Անուն, Ազգանուն	Բնակության վայր	Երեխա	ՀՀ դրամ	Հովանավոր
04.04.26	Աճեմյան Լուսինե Գալուստյան Հակոբ	Կոտայքի մարզ, գ. Զառ	7	330000	Zara Javakova, USA
04.04.26	Պողոսյան Ծովինար Հարությունյան Գրիգոր	Կոտայքի մարզ,գ. Մրգաշեն	5	330000	Թոնի Կահվե, Մեծ Բրիտանիա
15.04.26	Գալոյան Մարինե	Արմավիրի մարզ, գ. Լեռնագոգ	4	330000	Sevak Allahverdian, Armineh Gholian և զավակունք `Serly and Ejmin, USA
15.04.26	Առստամյան Ռուզաննա Հովհաննիսյան Կամո	Արմավիրի մարզ, գ. Արմավիր	5	330000	Բագրատ Նազարյան, Մեծ Բրիտանիա
15.04.26	Գրիգորյան Արևիկ Խոսրովյան Էռնեստ	Արագածոտնի մարզ, գ. Ներքին Սասնաշեն	9	330000	Diana Barsam, USA
17.06.26	Հովհաննիսյան Հայկանուշ Ղազարով Արսեն	Կոտայքի մարզ, գ. Կապուտան	9	330000	Արամ, Հեղինե և զավակունք՝ Ռուբեն, Լիդուշ, Մարիամ և Սուրեն Գրիգորյաններ, ՀՀ
09.07.26	Հովհաննիսյան Լիաննա	Լոռու մարզ, գ.Արջհովիտ	4	330000	Սարվարյան Նժդեհ, Ղուլյան Դիանա, ԱՄՆ
09.07.26	Վարդանյան Լուսինե	Արարատի մարզ, գ. Գետաշեն	5	330000	Ղուլյան Դիանա, Սարվարյան Նժդեհ և զավակունք՝ Քևին և Քլոյի, ԱՄՆ

Վճարումներ ստացած առաջին հորթի և նրա խնամքի համար

	Անուն, Ազգանուն	**50000** ***ՀՀ դրամ***	**20000** ***ՀՀ դրամ***	**20000** ***ՀՀ դրամ***	**20000** ***ՀՀ դրամ***	**10000** ***ՀՀ դրամ***	**10000** ***ՀՀ դրամ***
1	Սարդարյան Օվսաննա	10.02.2026	23.03.2026	15.04.2026	05.05.2026	06.06.2026	07.07.2026
2	Բաղդասարյան Գայանե	17.02.2026	23.03.2026	15.04.2026	05.05.2026	06.06.2026	07.07.2026
3	Մակարյան Վաչիկ	03.03.2026	01.04.2026	05.05.2026	06.06.2026	07.07.2026	
4	Նավասարդյան Սերինե	15.03.2026	01.04.2026	05.05.2026	06.06.2026	07.07.2026	
5	Մնացականյան Հասմիկ	08.03.2026	01.04.2026	05.05.2026	06.06.2026	07.07.2026	
6	Թովմասյան Ժենյա	02.04.2026	05.05.2026	06.06.2026	07.07.2026		
7	Գալոյան Մարինե	27.04.2026	27.05.2026	27.06.2026	07.07.2026		
8	Մակարյան Հեղինե	25.05.2026	27.06.2026	27.07.2026			
9	Պողոսյան Սեդա	03.06.2026	03.07.2026				

Հիմնադրամի շահառու բազմազավակ ընտանիքներին սննդի և կենցաղային տեխնիկայի տրամադրման տարեկան ամփոփ հաշվետվություն, 2024-2026թթ.

Անվանում	**Տարեթիվ**	**Քանակ**	**Գումար-*ՀՀ դրամ***
Սնունդ	2024	1210	962,644
Սնունդ	2025	5520	3,983.500
Կենցաղային (*Սառնարան-1 Հեռուստացույց-3 Լվացքի մեքենա-2*)	2025	6	950.379
Սնունդ	2026	5020	5,661.403
Կենցաղային (*Գազօջախ-4 Սառնարան-1 Լվացքի մեքենա-1*)	2026 *առաջին կիսամյակ*	6	659.000

ՍՏԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ 2026)

Հ/հ	Ամսաթիվ	Ուղարկող	Նպատակ	Գումար, ՀՀ դրամ	Համարժեք
1	05/01/26	Վանեցյան Վերոնիկա	Օգնություն	3700000	10000 ԱՄՆ $
2	13/01/26	Քուշերյան Կատյա	Օգնություն ԽԵԱ ծրագիր	380000	
3	14/01/26	Բորոյան Ռաֆիկ	Օգնություն	193717	523.56 ԱՄՆ $
4	21/01/26	Թոնի Կահվե	Օգնություն	400000	
5	22/01/26	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
6	04/02/26	Վանեցյան Արմեն	Օգնություն	3700000	10000 ԱՄՆ $
7	11/02/26	Հովհաննիսյան Վոլոդյա	Օգնություն	120000	
8	18/02/26	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
9	06/03/26	Թեքեյան Կենտրոն հիմնադրամ	Նվիրատվություն	1475000	
10	12/03/26	Վանեցյան Արմեն	Օգնություն	3700000	10000 ԱՄՆ $
11	23/03/26	Քուշերյան Կատյա	Օգնություն ԽԵԱ ծրագիր	380000	
12	03/04/26	Վանեցյան Արմեն	Օգնություն	3700000	10000 ԱՄՆ $
13	06/04/26	Արամ, Հեղինե և զավակունք՝ Ռուբեն, Լիդուշ, Մարիամ և Սուրեն Գրիգորյաններ	Օգնություն	299200	800 ԱՄՆ $
14	16/04/26	Սարգսյան Արմեն	Օգնություն գրքերի ծրագիր	37200	
15	18/04/26	Թեքեյան Կենտրոն հիմնադրամ	Նվիրատվություն	30000	
16	21/04/26	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
17	05/05/26	Վանեցյան Արմեն	Օգնություն	3700000	10000 ԱՄՆ $
18	05/05/26	Մելիքյան Գուրգեն	Ծառերի ծրագիր, Թամարա Հովհաննիսյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի	20000	
19	05/05/26	Sevak Allahverdian, Armineh Gholian և զավակունք ՝ Serly and Ejmin	Օգնություն	331200	900 ԱՄՆ $
20	12/05/26	Թեքեյան Կենտրոն հիմնադրամ	Նվիրատվություն	3006985	
21	12/05/26	Թեքեյան Կենտրոն հիմնադրամ	Նվիրատվություն	30000	
22	18/05/26	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
23	31/05/26	Մելիքյան Գուրգեն	Ծառերի ծրագիր, Չինար Ավետտյան-Նազարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի 28/02/26	20000	

24	31/05/26	Սոնյա Ֆունդուկյան	Օգնություն	183000	500 ԱՄՆ $
25	05/06/26	Վանեցյան Արմեն	Օգնություն	3640000	10000 ԱՄՆ $
26	05/06/26	Ռաֆֆի Բալյան	Օգնություն	183000	500 ԱՄՆ $
27	08/06/26	Հովհաննիսյան Վոլոդյա	Օգնություն	120000	
28	09/06/26	Թեքեյան Կենտրոն հիմնադրամ	Նվիրատվություն	30000	
29	15/06/26	Բարսեղյան Արամ	Օգնություն	87840	240 ԱՄՆ $
30	16/06/26	Նիկ Ագուլյան	Օգնություն	732000	2000 ԱՄՆ $
31	19/06/26	Կարապետյան Կարապետ	Օգնություն	1000	
32	22/06/26	Պարզյան Սիրամարգ	Օգնություն	10000	
33	23/06/26	Սարվարյան Նժդեհ, Ղուլյան Դիանա	Օգնություն ԽԵԱ ծրագիր	328950	900 ԱՄՆ $
34	23/03/26	Ղուլյան Դիանա, Սարվարյան Նժդեհ և զավակունք՝ Քևին և Քլոյի	Օգնություն ԽԵԱ ծրագիր	328950	900 ԱՄՆ $
35	25/06/26	Թեքեյան Կենտրոն հիմնադրամ	Նվիրատվություն	2000000	
				32,908.042	**67,263.56**

ՍՏԱՑԱԿԱՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի կողմից Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի «Իգնատ Մամյանի անվան համայնքային գրադարան ՀՈԱԿ-ին է նվիրաբերվում ընդհանուր թվով 24 անուն գիրք: Անվանացանկը ներկայացվում է ստորև.

1. Բակուր «Գյուլիստան նամե» գիրք առաջին
2. Ռոզմարի Հարությունյան Քոհեն «Վերապրած խոյեցի Արուսյակը»
3. Հովիկ Վարդումյան «Բաժանարար գիծ»
4. Արցախ Բունիաթյան «Արյունոտ օրեր» Մարտակերտ 1993թ. գիրք 3
5. Խաչատուր Թահմազ «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը»
6. Սամվել Մուրադյան «Գրական հանրագիտարան» Գիրք Ա-1օրինակ
7. Սամվել Մուրադյան «Գրական հանրագիտարան» Գիրք Ե-1 օրինակ
8. Խաչիկ Մանուկյան «Անմահական»
9. Լինա Մալեքյան «Հայ-Իրանական պատմամշակութային կապերն արդի փուլում»
10. Քարոլայն Նաջարյան,բժիշկ «Կանչ հայրենի տնից»
11. Արտաշես Պապոյան «Հայագիտական հետազոտություններ»
12 Մկրտիչ Մկրյան «Հատընտիր»
13.Ստեփան Ալաջաջյան «Չսպիացող վերքեր»-վեպ հատոր 3-րդ -2 օրինակ
14. Ստեփան Ալաջաջյան «Եղեգները չխոնարհվեցին» 2022թ. հրատ. 1 օրինակ
15. Ստեփան Ալաջաջյան «Եղեգները չխոնարհվեցին» 2024 թ. հրատ. 1 օրինակ
16. Մարտիկ Բաղդասարյան «Աղետ Ազատագրում» մատենաշար 13
17. Արտակ Մաղալյան «Արցախի մելիքությունները»
18.Հայկական բարենորոգումների և ՀՀ-ի վերաբերյալ ազգերի լիգայի ընդունած փաստաթղթերի ժողովածու
19. Արման Եղիազարյան «Աշոտ Երկաթ թագավոր հայոց»
20. Բաբկեն Չուքասզեան «Երկերի ժողովածու»-հատոր Ա

21. Նաիրի Հոխիկյան «35» հատոր Ա-2 օրինակ
22. Փանոս Թերլեմեզյան «Կյանքիս հուշերը»-2 օրինակ
23. Գուրգեն Մելիքյան «Ֆիրդուսին և իր Շահնամեն» հայկական մշակույթում և գրականության մեջ-2 օրինակ
24. Գևորգ Քիլիմջյան «Բալկանյան հիմնախնդիրները և միջազգային դիվանագիտությունը»

Փոխադրումը և տեղափոխումը իրականացվել է Աղաբաբյան քույրերի օժանդակությամբ:

Անուն Ազգանուն *Սյուզաննա Աղաբաբյան ստորագրություն*
Անուն Ազգագնուն *Ռուզաննա Աղաբաբյան ստորագրություն*

«Իգնատ Մամյանի անվան համայնքային գրադարան»
ՀՈԱԿ-ի տնօրեն Տաթևիկ Եսայան
Ստորագրություն Ամսաթիվ՝ 06.07.2026

ՍՏԱՑԱԿԱՆ

Կողբի Բագրատ Սահայանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի գրադարանին է նվիրաբերվում թվով 25 գիրք (ցանկը՝ ստորև) «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի կողմից: Տեղափոխումը և փոխանցումը իրականացվել է Աղաբաբյան քույրերի օժանդակությամբ:

Անուն, ազգանուն՝ Ռուզաննա Աղաբաբյան *Ստորագրություն՝*
Անուն, ազգանուն՝ Սյուզաննա Աղաբաբյան *Ստորագրություն՝*
Ստացող՝
Կողբի Բագրատ Սահակյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Հայկանուշ Ալեքսանյան
Ստորագրություն Կնիք

19.03.2026
1. Խ. Թահմազ «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» -2 օրինակ
2. Բ. Չուքասզեան «Երկերի ժողովածու»-2 օրինակ
3. Հ Սիմոնյան- «Անդրանիկի ժամանակը» 2 հատոր-2 օրինակ
4. Ա. Բունիաթյան «Արյունոտ օրեր»-2 օրինակ
5. Ե. Կյուրեղյան «Իմ հուշերի ճանապարհով»-2 օրինակ
6. Ստ. Ալաջաջյան «Եղեգները չխոնարհվեցին»-2 օրինակ
7. Ստ.Ալաջաջյան «Չսպիացած վերք» 3 հատոր-2 օրինակ
8. Մ. Մկրյան «Հատընտիր»
9. Ռ. Հարությունյան «Վերապրած խոյեցի Արուսյակը» -2 օրինակ
10 Ք. Նաջարյան «Կանչ հայրենի տնից»-2 օրինակ
11. Խ. Պալյան- «Լույս ի լուսոյ» -2 օրինակ
12. Մուրադյան «Գրական հանգրվաններ»-2 հատոր-2 օրինակ
13. Լ. Ալոյան «Հայ հասարակական միտքը «Մշակ» լրագրում (1892-1905թ.)
14. Լ. Մալեքյան «Հայ-իրանական պատմամշակութային կապերն արդի փուլում»
15. Բ. Ջիվանի «Երգեր ու մտքեր»
16. «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը»
17. Խ.Մանուկյան «Անմահականս»
18. Գ. Մարտիկյան «Ապրելու բանաձև»
19. Ս. Դիլանյան «Հին ու նոր հավատալիքներ»
20. Ս. Վարդանյան «Համշենահայեր»
21. Ա. Պապոյան «Հայագիտական հետազոտություններ»
22. Ս. Չախալյան «Մոնթեն նայում է Արարատին»
23. Վ. Օվյան «Այս Ղարաբաղն է»
24. Ս. Դավթյան «Փարաջանով»
25. Մ. Աճեմյան «Լույս ի բարի» -2 օրինակ

ՍՏԱՑԱԿԱՆ

Կողբի Բագրատ Սահակյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի գրադարանին է նվիրաբերվում գրող, հրապարակապոս, թարգմանիչ Վարուժան Խաստուրի (Վարուժան Սուրենի Սահակյան) հեղինակած «Համեղ այբուբեն Հայոց» անվանումը կրող հետաքրքրաշարժ այբբենաշարը (թվով 8 օրինակ), որն իր ուրույն և չկրկնվող մոտեցմամբ կրտսեր դպրոցական տարիքի սովորողների համար կբացահայտի հայոց անզուգական տառաշխարհի առանձնահատկությունները «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի կողմից: Տեղափոխումը և փոխանցումը իրականացվել է Աղաբաբյան քույրերի օժանդակությամբ:

Ռուզաննա Աղաբաբյան Ստորագրություն՝
Սյուզաննա Աղաբաբյան Ստորագրություն՝
Ստացող՝ Կողբի Բագրատ Սահակյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն՝
Հայկանուշ Ալեքսանյան
Ստորագրություն Կնիք՝
02.02.2026թ.

ՍՏԱՑԱԿԱՆ

«23» ապրիլ 2026թ.

Ես, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի տնօրեն «Գուրգեն Մելիքյանս, «Շիրակի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ին նվիրաբերեցի 50 կտոր գրականություն: Գիրք՝ հայերեն, 58 միավոր: Ցուցակը կցվում է:

Հանձնեց՝ Գ. Մելիքյան
«Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի տնօրեն
Ընդունեց Ս. Գևորգյան ստորագրություն
«Շիրակի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրեն

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ»ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ Շիրակի մարզային գրադարանի տնօրեն Ս. Գևորգյան

23.04.2026
Սույն ակտը կազմված է առ այն, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»-ը հանձնում է, իսկ «Շիրակի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրեն ստանում է.
Գիրք՝ հայերեն 58 միավոր

1. Արցախի պետական համալսարան-Արցախի ժողովրդագիտությունը /բանահյուսություն/-9,10,11,15 հատորներ
2. Արցախի պետական համալսարան-Հադրութի բառ ու բան
3. Հ. Աբրահամյան, Լ. Մատինյան, Ն. Մկրտչյան-«Հարավկովկասյան հանրապետությունների անկախությունը և ազգամիջյան հարաբերությունները հետխորհրդային ժամանակաշրջանում»
4. Ե. Սերգին «Ագռավաքար»
5. Ս.Վարդանյան «Ընդարձակ մատենագրություն»
6. Ս. Խաչերեան-Փիլոսեան Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Գ. Խաչերյանի աշխատությունների մատենագրություն և կարծիքներ ու գնահատականներ իր հայագիտական վաստակի մասին-2 օրինակ

7. Ս.Վարդանյան «Աքսորված համշենահայերի հետքերով»-2 օրինակ
8. Ա. Հակոբջանյան «Հայոց Աղվանից աշխարհի չորս հազարամյա պատմությունը»-2 օրինակ
9. Լ. Խաչերյան «Աբեղաների պաշտպանական մարտավարությունը և նրանց թյուրիմացությունները գրաբանական տեսության հարցերում»
10. Ա. Ավագյան «Արմտանի մեծ ընկուզենին. Հակոբ Մնձուրի»
11. Գ. Չալիկյան «Անլռելի սիրահարը»- 2 օրինակ
12. Մ. Աճեմյան-«Լույս ի բարի»
13. Թ.Վեհապետյան «Նոր սերունդը քավության նոխազ»
14. Ռ. Քոհեն «Վերապրած խոյեցի Արուսյակը»
15. Լ.Խաչերյան «Հայոց ազգային դիցարանը»
16. Վ. Օվյան «Այս Ղարաբաղն է»
17. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ-«Արցախի պատմության հիմնահարցերը ըստ սկզբնաղբյուրների և պատմագիտական գրականության»
18. Ա. Մելիք-Իսրայելյան «Երբ աշխարհն է ծափահարում»
19. Ս. Մուրադյան «Գրական հանգրվաններ» գիրք Ա
20. Ս. Մուրադյան «Գրական հանգրվաններ» գիրք Ե
21. Ս. Դավթյան «Փարաջանով»
22. Բ. Կարապետյան «Գյուլիստան Նամե»
23. Բ. Հարությունյան, Պ. Ադամյան «Կյանքի և ստեղծագործության տարեգրություն»
24. Հ. Գևորգյան «Դրո»
25. Վ. Բդոյան «Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը»
26. Ա. Կիրակոսյան «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը»
27. Ա. Մանուկեան «Նամականի»
28. Գ. Մահարի «Սիբիրական»
29. Ա. Մարգարյան, Գ.Է.Գուարչ. «Հարցազրույց պատմության համար»
30. Է. Մինասյան «Հայ հերոսուհի կանայք»
31. Գ.Հ. Գուարչ «Սպիտակ լեռը»
32. Ա. Մաղալյան «Արցախի մելիքությունները XVII-XIX դդ»-2 օրինակ
33. Դ. Սաքայեան «2500 հայկական առածներ ֆրանսերեն թարգմանությամբ»
34. Դ. Սաքայեան «2500 հայկական առածներ գերմաներեն թարգմանությամբ»
35. Դ. Սաքայեան «Հայկական առածներ անգլերեն թարգմանությամբ»
36. Ա. Ստեփանյան «Խորենիկա»
37. Շ. Նաթալի «Թուրքերը և մենք»
38. Ե.Գևորգյան-«Հայացքը որպես հաղորդակցման միջոց. Հայացքի տեսակների բառարան»
39. Ա. Եղիազարյան-«Աշոտ Երկաթ թագավոր հայոց»
40. Է. Մինասյան-«Մայրաքաղաք Երևանը ՀՀ անկախության տարիներին»
41. Հ. Մանուչարյան «Արարատիզմ, Հայոց ազգայնականությունը պատմության շրջադարձային հանգրվաններում»
42. Վ.Ս. Մաղալյան «Իմ նվերը Հայր Հայաստանին»
43. Փ. Ենգոյան, Է. Մինասյան «ԵՊՀ-ն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին»
44.Դ. Սաքայան «Նրանց քշում են անապատները..»
45. Գ. Քիլիմիջյան «Բալկանյան հիմնախնդիրները և միջազգային դիվանագիտությունը»
46. ԵՊՀ-Ավ. Իսահակյանի նամակները
47. Ա. Փաշայան-«Ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյան»
49. Համահայկական վերնախորհուրդ-Հայկական բարենորոգումների և ՀՀ վերաբերյալ Ազգերի լիգայի ընդունած փաստաթղթերի ժողովածու
50. Մ. Աճեմյան «Լույսի երանգները»

Հանձնեց՝. Գ.Մելիքյան
Ընդունեց՝ Ս. Գևորգյան

Ստորագրություն/Կնիք
«23» ապրիլ 2026թ.

Բերձորցի շախմատիստ Մենուա Հակոբյանի հերթական հաղթանակը

Բերձորցի շախմատիստ Մենուա Հակոբյանի հաջողությունների մասին անդրադարձել ենք «Բարեգործ» թերթի նախորդ համարներում:

«Գյումրի OPEN» միջազգային շախմատային մրցաշարում նա մինչև 18 տարեկանների խմբում գրավեց պատվավոր առաջին տեղը: 2025թ. օգոստոսի 9-17-ը Վրաստանի Փոթի քաղաքում կայացած «18th Poti International Chess Festival Nana Aleksandria Cup - 2025» շախմատի միջազգային փառատոնի ժամանակ Մենուան զբաղեցրեց 4-րդ հորիզոնականը:

Իսկ ս.թ. հուլիսի 14-ին Վրաստանի Փոթի քաղաքում անցկացված Irakli Lolua Cup կայծակնային շախմատի մրցաշարում ՖԻԴԵԻ վարպետ Մենուա Հակոբյանը զբաղեցրեց 2-րդ հորիզոնականը:

Հոգաբարձության խորհուրդը ջերմորեն շնորհավորում է բերձորցի պատանի շախմատիստի փայլուն հաղթանակը՝ մաղթելով նորանոր ձեռքբերումներ և հաջողություններ:

ՖԻԴԵԻ վարպետ Մենուայի ներկայիս վարկանիշը կազմում է 2387 կետ:

Հիմնադրամը սիրով ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Մենուա Հակոբյանին:

Մենուան գրավեց երկրորդ հորիզոնականը

Մենուայի դիպլոմը

Մենուայի նվաճած գավաթները

Գրական անկյուն

Ընթերցողին ենք ներկայացնում ենք պրոֆ. Սամվել Մուրադյանի կազմած Հովի. Շիրազի «Անտիպ էջեր» հատորաշարի 6-րդ գրքից միայն մեկ բանաստեղծություն:

* * *

Երբ բարություն եմ ես մեկին անում,
Այն օրերին է սիրտ լիս,ս ծափ տա
Այն պահերին եմ ես թեթևանում,
Երբ ամպի պես եմ իմ վիշտը լալիս,
Երբ իմ անձրևով ուրիշի մատաղ
Արտն է բարձրանում, երբ վշտով իմ պաղ՝
Չեմ այրում ես քո սիրտն էլ, նազելիս,
Դավ սիրտդ, որ ինձ միշտ ցավ էր տալիս,–
Դավում ես ինձ դեռ, բայց սիրտս դարձյալ
Կարծես չի հիշում դժոխքն իր անցյալ,
Այնժամ եմ հպարտ ես ինձ մարդ ասում,
Երբ գեթ մի սրտի ցավերն եմ կիսում,–
Իսկ երբ ջուրը չեմ գեթ մի ջաղացի՝
Օձ թույն է թվում մեղրն էլ իմ հացի:

ՀՀ վաստակավոր նկարիչ, Շմավոն Շմավոնյանի "Արարատ"-ներից մեկը

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՄՈՒՐԱԴՅԱՆ Ս. Պ. , բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝
Ավագյան Ա., բ.գ.դ, պրոֆեսոր
Մելիքյան Գ., բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալ., պ.գ.թ., պրոֆեսոր
Նյութերի դասակարգումը՝ հոգաբարձության խորհրդի անդամ **Մերի Մելիքյանի**
Լուսանկարները՝ **Զ. Ըռքոյանի**

Համարի շարվածքը, ձևավորումը՝ **Ս. Մուրադյանի**
Տպաքանակը՝ 99:
Թերթը բաժանվում է անվճար:
Խմբագրության հասցեն՝
Երևան-0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետ մասնաշենք, 212 սենյակ,
Հեռ.՝ 060-710617; 055-522936; 010-552537: